ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Դասընթաց 4

ՀՀ հարկային օրենսդրություն

Քննության հարցեր

Հունիս 2022թ.

Քննական հարցերին պատասխանելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Հարկային Օրենսգրքի՝ 31.03.2022թ.-ի գործող խմբագրությամբ սահմանված նորմերով, հաշվի առնելով նաև Օրենսգրքի եզրափակիչ և անցումային մասով նախատեսված դրույթները: Հաշվարկների համար որպես չափման միավոր ընդունված մեծությունները յուրաքանչյուր խնդրի համար նշված է առանձին:

Պահանջվում է բոլոր խնդիրների պատասխաններում նշել կատարված հաշվարկներն ամբողջությամբ:

Խնդիր 1. Շահութահարկի վերաբերյալ

Հարկման ընդհանուր համակարգում գործող ՀՀ ռեզիդենտ «Մերկուրի» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) իրականացնում է շինանյութերի ներմուծում և իրացում, ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 2021 թվականի (այսուհետ՝ հաշվետու տարի) համար առկա է հետևյալ տեղեկատվությունը (համարակալման մեջ *-ով նշված է եկամտի կամ նվազեցման հետ կապված Լրացուցիչ տեղեկատվության կետերի համարները)՝

Հազար դրամ

	Գործարքներ/Եկամուտներ	Գումարը
1	Շինանյութերի իրացումից հասույթ	365,000
2*1	Հողամասի իրացումից հասույթ	2,300
3*2	Պահեստի մի մասի ենթավարձակալության հանձնելուց հասույթ	400
4*3	Աշխատակցի կողմից Ընկերության գույքին պատճառված վնասի հատուցումից եկամուտ	700
5	Ներդրումային ֆոնդում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացված շահաբաժին	1,450
6	Արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատման դրական արդյունք	3,250
	Ընդամենը	**373,100**

	Գործարքներ/Նվազեցումներ	Գումարը
1*4	Վաճառված շինանյութի ինքնարժեք	308,000
2*4	Բժշկական հաստատությանը տրամադրված շինանյութի ինքնարժեք	900
3	Անհատույց և իրական արժեքից էականորեն ցածր արժեքով վաճառված շինանյութերի համար վճարված լրացուցիչ ԱԱՀ-ի գումար	560
4	ԱԱՀ–ից ազատված գործարքների համար ԱԱՀ պակասեցված գումարներ	730
5*5	Վարչական անձնակազմի աշխատավարձի, կոմունալ, գրասենյակային, հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	15,400
6*6	ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսեր	2,350
7*7	Իրացման անձնակազմի աշխատավարձի, կոմունալ, գրասենյակային, հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	17,350
8*13	Աշխատակիցների սննդի կազմակերպման ծախսեր	930
9	Իրացված հողամասի ինքնարժեք	2,000
10*2,8	Վարձակալական վճարներ	7,450
11	Ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերի ձեռքբերման հետ կապված այլ ծախսերը	320
12*9	Ամբարձիչի լուծարման ծախսեր	770
13*10	Ֆիզիկական անձից ստացված փոխառության գծով հաշվարկված տոկոս	4,600
14*11	Վարձակալված գրասենյակի վերանորոգման ծախս	840
15*3	Աշխատակցի կողմից Ընկերության գույքին պատճառված վնասի ինքնարժեք	700
16*12	Այլ ծախսեր	1,740
17	Ոչ ռեզիդենտ հաճախորդից ստացված գումարներից ՀՀ տարածքից դուրս միջնորդ	65

	բանկերից պահված գումարներ	
18[*14]	Բարեգործական հիմնադրամին անհատույց տրամադրված մարդատար մեքենայի հաշվեկշռային արժեք	530
	Ընդամենը նվազեցումներ	**365,235**

Լրացուցիչ տեղեկատվություն՝

1. Ընկերությունն իրացրել է հաշվետու տարվան նախորդող հարկային տարվա հունիսի 1-ին անհատույց ստացված հողամասը, որի արժեքը հանձնման-ընդունման ակտում նշված է եղել 2,000 հազար ՀՀ դրամ: Հողամասի անշարժ գույքի հարկով հարկման բազան ստացման պահին կազմել է 2,500 հազար ՀՀ դրամ:

2. Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունն այլ կազմակերպությունից վարձակալել է պահեստ՝ ամսական 500 հազար ՀՀ դրամով, որի ¼ մասը 4 ամիս ժամկետով ենթավարձակալության է տրամադրել անհատ ձեռնարկատիրոջ:

3. Պատճառված վնասի (գույքի կորստի) դիմաց աշխատակիցը հաշվետու տարում հատուցել է 400 հազար ՀՀ դրամ:

4. Հաշվետու տարվա ընթացքում վաճառված շինանյութի հարկային բազայի սկզբնական արժեքների հանրագումարը կազմել է 313,000 հազար ՀՀ դրամ, որից 1,030 հազար ՀՀ դրամը կազմել է բժշկական հաստատությանը անհատույց տրամադրված շինանյութի արժեքը:

5. Վարչական նպատակով շահագործվող հիմնական միջոցների մաշվածության տարեկան ծախսը 240 հազար ՀՀ դրամով ավել է հիմնական միջոցների հարկային հաշվառմամբ հաշվարկված մաշվածության ծախսից: Հաշվետու տարում տնօրենի աշխատավարձը կազմել է 7,200 հազար ՀՀ դրամ, ում համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում կատարվել է 720 հազար ՀՀ դրամ կենսաթոշակային վճար:

6. Ընկերությունը հաշվետու տարվա ընթացքում 20 օրացուցային օրով ՀՀ տարածքից դուրս գործուղել է աշխատակցի և յուրաքանչյուր օրացուցային օրվա համար տրամադրել է 45 հազար ՀՀ դրամ օրապահիկ: Աշխատակիցը ներկայացրել է 1,450 հազար ՀՀ դրամ հանրագումարով գիշերավարձի և ճանապարհածախսի հիմնավորող փաստաթղթեր: Կառավարության կողմից օրապահիկի գումար սահմանված չէ:

7. Իրացման անձնակազմի աշխատավարձում ներառված է աշխատակիցների համար հաշվեգրված 1,350 հազար ՀՀ դրամ պարգևավճարների պահուստի գումարը, ինչպես նաև մեկ հաշմանդամ վարձու աշխատողին 600 հազար ՀՀ դրամ վճարված աշխատավարձը և 120 հազար ՀՀ դրամ Ընկերության միջոցների հաշվին հիվանդության նպաստը:

8. Ընկերությունը հաշվետու տարում տնօրենի համար վարձակալված բնակարանի համար վճարել է 1,200 հազար ՀՀ դրամ վարձավճար և 250 հազար ՀՀ դրամ կոմունալ վճարներ: Վճարները ներառված են վարձակալական վճարներ տողում:

9. Լուծարվող ամբարձիչի հաշվապահական հաշվեկշռային արժեք կազմել է 450 հազար ՀՀ դրամ, իսկ հարկային հաշվեկշռային արժեքը՝ 550 հազար ՀՀ դրամ: Լուծարման համար անհրաժեշտ նյութերի արժեքի և բանվորի աշխատավարձի ծախսի հանրագումարը կազմել է 320 հազար ՀՀ դրամ:

10. Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը ՀՀ ֆիզիկական անձից ստացված փոխառության դիմաց տոկոսային ծախսը հաշվարկել է տարեկան 25%-ով: Հարկային տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կազմել է 12%, իսկ Ընկերության սեփական կապիտալը կազմել է 1,500 հազ. ՀՀ դրամ:

11. Ընկերությունը 01/03/21թ.-ին ՀՀ ֆիզիկական անձից անհատույց վարձակալել է գրասենյակ, որի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է 25,400 հազար ՀՀ դրամ: Նույն օրը կատարել էր 840 հազար ՀՀ դրամի վերանորոգում՝ համաձայն պայմանագրի: Պայմանագրում և հանձնման-ընդունման ակտում գրասենյակի սկզբնական կամ հաշվեկշռային արժեքի վերաբերյալ նշում չի եղել: Վարձակալությունը դադարեցրել է հաշվետու տարվա դեկտեմբերի վերջին:

12. Այլ ծախսերը բաղկացած են աշխատակիցների կոլեկտիվ հանգստի կազմակերպման 1,360 հազար ՀՀ դրամ և 380 հազար ՀՀ դրամ արտարժույթի փոխարկման ծախսերից:

13. Աշխատակիցների սննդի կազմակերպման ծախսերում առկա էին 230 հազար ՀՀ դրամի միակողմանի և 250 հազար ՀՀ դրամի երկկողմանի գնման ակտեր:

14. Մարդատար մեքենայի հարկային հաշվեկշռային արժեքը կազմել է 850 հազար ՀՀ դրամ:

15. Ընկերությունը շահութահարկի հաշվարկը ներկայացրել է 10/03/2022թ.-ին, 2021թ. համար վճարել է 3,830 հազ. դրամ շահութահարկի կանխավճար:

16. Ընկերության 2020թ.–ի շահութահարկը կազմել 1,250 հազար ՀՀ դրամ, իսկ 2021թ.-ի 4-րդ եռամսյակի ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների գումարը կազմել է 98,500 հազար ՀՀ դրամ:

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- *Եթե ուղղակի նշում չկա, ապա համարել, որ նվազեցումների (ծախսերի, կորուստների, այլ նվազեցումների) փաստաթղթերով հիմնավորվածության պահանջը հարկային հաշվառման մասով բավարարված է:*
- *Հարկային հաշվառման մասով հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները հաշվարկելու համար Ընկերությունը կիրառում է ՀՀ Հարկային օրենսգրքով թույլատրելի ամորտիզացիոն բոլոր հնարավոր նվազագույն ժամկետներ ընդունելու հնարավորությունը:*

Պահանջվում է.

Վերը նշված տվյալների հիման վրա հաշվարկել Ընկերության հաշվետու տարվա հարկվող շահույթը (վնասը), հաշվարկել շահութահարկի գումարը և հաշվարկել պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի և հաշվետու տարվան հաջորդող տարվա 1-ին եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարները: /30 միավոր/

Խնդիր 2. Ավելացված արժեքի հարկի վերաբերյալ

«Յուպիտեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է ԱԱՀ վճարող առևտրային կազմակերպություն: ԱԱՀ-ի հաշվարկման նպատակով՝ Ընկերությունը, ըստ գործունեության տեսակների, հարկման օբյեկտների կամ հարկման բազաների կամ հարկի գումարների կամ եկամուտների կամ դրանց ստացման հետ կապված՝ Օրենսգրքով սահմանված նվազեցումների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումը իրականացնում է առանձնացված եղանակով, եթե առանձնացված հաշվառում վարելը հնարավոր է: Ընկերությունը 2021թ.-ի դեկտեմբեր ամսին (այսուհետ՝ հաշվետու ամիս) իրականացրել է հետևյալ գործարքները.

1. Վաճառքներ.

1.1. Հարկային հաշիվներով իրացրել է 69,750 հազար ՀՀ դրամի շինանյութ՝ առանց ԱԱՀ-ի և բնապահպանական հարկի: Հաշվարկել է 420 հազար ՀՀ դրամ բնապահպանական հարկ

1.2. Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններով իրացրել է 18,464 հազար ՀՀ դրամի շինանյութ (այդ թվում՝ ԱԱՀ), որից 3,420 հազար ՀՀ դրամի համար դուրս է գրել հարկային հաշիվներ՝ ի լրումն 1.1 կետի:

1.3. Իրական արժեքից էականորեն ցածր՝ 6,300 հազար ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ) արժեքով հատուցմամբ մատակարարված շինանյութերի իրական արժեքը կազմել է 9,000 հազար ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ): Իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ 2,400 հազար ՀՀ դրամի (այդ թվում՝ ԱԱՀ) համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում արտացոլվել է 30% առևտրային զեղչ՝ համաձայն նախապես ընդունված գրավոր ակտի:

1.4. ՀՀ ֆիզիկական անձին է իրացրել անհատույց ստացված հողամասը 2,300 հազար ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) արժեքով: Հողամասի անշարժ գույքի հարկով հարկման բազան վաճառքի պահին կազմել է 3,500 հազար ՀՀ դրամ:

1.5. ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությանն հարկային հաշվով օտարել է 2,560 հազար ՀՀ դրամ շինանյութ (այդ թվում՝ ԱԱՀ) ՝ ի լրումն 1.1 կետի, որի ներմուծման ժամանակ հաշվանցվել է 620 հազար ՀՀ դրամ ԱԱՀ:

1.6. Դուրս է գրել 1,800 հազար ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ) հարկային հաշիվ՝ ի լրումն 1.1 կետի, որով իրացրել է մարդատար մեքենա, որի հարկային հաշվեկշռային արժեքը կազմել է 870 հազար ՀՀ դրամ: Մեքենան Ընկերությունը ձեռք էր բերել ԱԱՀ-ով և ձեռք բերման պահին ԱԱՀ-ը պակասեցնելով ավելացրել էր մեքենայի սկզբնական արժեքին:

1.7. Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների իրականացման դիմաց ռեզիդենտ կազմակերպությանը դուրս է գրել 960 հազար ՀՀ դրամի հաշիվ վավերագիր:

2. Լուծարել է ԱԱՀ-ով ձեռք բերված ամբարձիչ, որի հաշվապահական հաշվեկշռային արժեք այդ պահին կազմել է 450 հազար ՀՀ դրամ, իսկ հարկային հաշվեկշռային արժեքը՝ 550 հազար ՀՀ դրամ:

3. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ տարածք է ներմուծել 25,000 USD արժեքով ապրանքներ: Բեռնափոխադրման համար ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ստացվել է 1,800 USD արժեքով հաշիվ՝ որից 200 USD-ը կազմել է ՀՀ պետական սահմանից մինչև Ընկերության պահեստ տեղափոխման արժեքը: 21/12/21թ.-ին գրանցվել է մաքսային հայտարարագիրը, որի մաքսային արժեքի հաշվարկման համար անհրաժեշտ բոլոր ճշգրիտ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը ներկայացվել են մաքսային մարմին, որոնց հիման վրա մաքսային մարմինը հաշվարկել է ապրանքների ներմուծման մաքսային արժեքը: Այդ ներմուծման համար Ընկերությունը հաշվարկել և վճարել է 5% մաքսատուրք, 1% բնապահպանական հարկ, 10% հակագնագցման տուրք և ԱԱՀ: ՀՀ ԿԲ հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված USD միջին փոխարժեքներն են 20/12/2021թ.՝ 480 դրամ, 21/12/2021թ.՝ 481: Համաձայն պայմանագրի այդ ապրանքների 30%-ն Ընկերությունը հաջորդ ամսում մատակարարելու է

բարեգործական կազմակերպությանը՝ որպես ԱԱՀ-ից ազատվող ապրանքներ (առկա է ՀՀ Կառավարության լիազոր մարմնի որոշում)։

4. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով 30/11/21թ.-ին ՀՀ տարածք է ներմուծված և գրանցված մաքսային հայտարարագրով ապրանքների համար հաշվարկված 4,380 հազար ՀՀ դրամ ԱԱՀ-ն Ընկերությունը վճարել է 01/12/21թ.-ին։

5. Դուրս գրման ամսաթվերով ՀՀ մատակարարներից ստացել է 8,830 հազար ՀՀ դրամ արժեքով (այդ թվում՝ ԱԱՀ 1,600 հազար ՀՀ դրամ) հարկային հաշիվներ, իսկ մատակարարման ամսաթվերով՝ 7,170 հազար ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ 1,195 հազար ՀՀ դրամ), որից 2,151 հազար ՀՀ դրամ արժեքով հարկային հաշիվներ Ընկերությունը չի ընդունել և մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը էլեկտրոնային եղանակով չի ստորագրել։

6. Ներկայացուցչական ծախսերի համար կատարել է 260 հազար ՀՀ դրամ (այդ թվում ԱԱՀ) հանրագումարով ՀԴՄ կտրոններով ձեռք բերումներ, որոնց վրա առկա է Ընկերության ՀՎՀՀ-ն և նյութերի բացվածքը։

7. 30/12/2021թ.-ին ոչ ռեզիդենտ կազմակերպությունից ստացել է շինանյութի վաճառքի համար ֆրանչայզինգի ծառայության հաշիվ 1,700 USD արժեքով և 10/01/2022թ.-ին մատակարարի անունից դուրս է գրել հարկային հաշիվ՝ մատակարարման ամսաթիվը նշելով 30/12/21թ։ ՀՀ ԿԲ հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված USD միջին փոխարժեքներն են 30/12/2021թ.-ին 480 AMD, 09/01/2022թ.-ին՝ 482 AMD, 10/01/2022թ.-ին՝ 483 AMD։

8. 13/12/2021թ.-ին ոչ ռեզիդենտ կազմակերպությունից ստացել է իր աշխատակցին արտերկրում անցկացված սեմինարի մասնակցության հաշիվ 950 USD արժեքով, սակայն մատակարարի անունից հարկային հաշիվ դուրս չի գրել։ ՀՀ ԿԲ հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված USD միջին փոխարժեքներն են 11/12/2021թ.-ին 495 AMD, 13/12/2022թ.-ին՝ 494 AMD։

9. Վարձակալված գրասենյակի վրա կատարված հարկային հաշվառմամբ կապիտալ բնույթի ծախսերի հաշվեկշռային արժեքը վարձակալությունը դադարեցնելու պահին կազմել է 805 հազար ՀՀ դրամ։ Կատարված ծախսերի 40%-ը բաղկացած է եղել ԱԱՀ-ով ձեռքբերումներից։

10. Ընկերությունը հաշվետու ամսվա մատակարարման ամսաթվերով ստացել է 2,930 հազար ՀՀ դրամի հաշիվ-վավերագրեր, որից 830 հազ. դրամ վերաբերում է 2022թ.-ի համար ապահովագրավճարի։

11. Տնօրենի համար վարձակալված բնակարանի համար վճարել է 100 հազար ՀՀ դրամ վարձավճար։

Եթե ուղղակի նշում չկա, ապա բոլոր դուրս գրված և ստացված հարկային հաշիվները հանդիսացել են օրենսգրքով սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվներ, և հաշվանցման իրավունքը օրենսգրքով սահմանված կարգով համարվել է բավարարված։

Պահանջվում է՝

Վերոնշյալ գործարքների հիման վրա հաշվել Ընկերության հաշվետու ամսվա բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը (կամ բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը, եթե այն առաջանում է) և լրացնել այդ նույն հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը հազար դրամներով։ Հաշվարկում պահանջվող Օրենսգրքի հոդվածին, մասին, կետին հղում կատարելու դաշտերում նշել գործարքների կետերը (հաշվարկի ձևը կցվում է)։

/25 միավոր/

Խնդիր 3. Եկամտային հարկ

Հարկման ընդհանուր համակարգում գործող «Սատուրն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի մարտ ամսին (այսուհետ՝ հաշվետու ամիս) իր աշխատակիցների և ֆիզիկական անձանց հետ կապված կատարել է հետևյալ գործառնությունները.

ա) Հաշվետու ամսվա համար՝ աշխատակիցների աշխատավարձի մասին հայտնի է հետևյալը՝

ՀՀ դրամ

հհ	**Անուն Ազգանուն**	**Պաշտոն**	**Սոցիալական վճար**	**Պայմանագրային աշխատավարձ**	**Զուտ աշխատավարձ**
1	Պետրոսյան Կարեն	Տնօրեն	Վճարող է	950,000	
2	Ավետյան Վահե	Հաշվապահ	Վճարող է		420,000
3	Հովհաննիսյան Արա	Իրացման մենեջեր	Վճարող չէ		500,000
4	Ներսիսյան Կամո	Իրացման մասնագետ	Վճարող չէ	350,000	

1. Ընկերության և աշխատակիցների փոխադարձ համաձայնությամբ Ընկերությունը աշխատակիցներից յուրաքանչյուր ամիս պահում է նաև 1% արհմիության վճար, որով ձևավորված ֆոնդի հաշվին աշխատակիցների համար կազմակերպում է սոցիալ-մշակութային միջոցառումներ։

2. Ընկերության բաժնետերերն են Պետրոսյան Կարենը՝ 40% և Ավետիսյան Վահանը 60% մասնակցություններով։ 2016թ.-ից մինչև 2018թ.-ի գործունեության արդյունքով Ընկերության ֆինանսական արդյունքը՝ չբաշխված շահույթը (2016թ.-ի համար 1,200 հազար ՀՀ դրամ, 2017թ.-ի համար 800 հազար ՀՀ դրամ, 2018թ.-ի համար 600 հազար ՀՀ դրամ) բաժնետերերի ժողովի կողմից 2021թ. մայիս ամսին հայտարարվել և բաշխվել էր որպես շահաբաժին 2 բաժնետերերի միջև, իսկ հաշվետու ամսում Պետրոսյան Կարենին դրամարկղից ամբողջությամբ վճարվել է իրեն հայտարարված շահաբաժինը։

3. Ավետյան Վահեի համար հաշվարկվել է փոխառության դիմաց տոկոս 380 հազար ՀՀ դրամ, սակայն դրամարկղից վճարվել տոկոսային եկամուտ՝ 760 հազար ՀՀ դրամ։

4. Հովհաննիսյան Արան գործուղվել է ՀՀ տարածքից դուրս 5 օրացուցային օրով՝ յուրաքանչյուր օրացուցային օրվա համար ստանալով 45 հազար ՀՀ դրամ օրապահիկ։ Արան ներկայացրել է 750 հազար ՀՀ դրամ հանրագումարով գիշերավարձի և ճանապարհածախսի հիմնավորող փաստաթղթեր։ Կառավարության կողմից օրապահիկի գումար սահմանված չէ։

5. Աշխատակիցների համար Ընկերությունը կատարել է սննդի կազմակերպման 70 հազար ՀՀ դրամի և կոլեկտիվ հանգստի կազմակերպման 1,060 հազար ՀՀ դրամի ծախսեր։

բ) Այլ ֆիզիկական անձանց հետ կապված գործարքներ

6. Ընկերության բաժնետեր՝ Վահան Ավետիսյանի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալ է ներդրվել բեռնատար ավտոմեքենա՝ 23,240 հազար ՀՀ դրամ գնահատված արժեքով։

7. Ընկերությունը քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում ծառայություն մատուցող Ներսես Միկոյանին նախորդ ամսում մատուցված ծառայության դիմաց բանկային փոխանցմամբ վճարել 560 հազար ՀՀ դրամ։ Ներսես Միկոյանը սոցիալական վճար կատարող չէ։

8. Աշխատակիցների սննդի կազմակերպման համար դրամարկղից վճարվել է 50 հազար ՀՀ դրամ արժեքով միակողմանի և 60 հազար ՀՀ դրամ արժեքով երկկողմանի գնման ակտեր։

Պահանջվում է.

Հաշվարկել Ընկերության հաշվետու ամսվա բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի գումարները, ինչպես նաև աշխատողներին

հաշվեգրված և վճարման ենթակա գումարները: Նշել 5-րդ կետում նկարագրված գործարքի՝ եկամտային հարկով հարկման առանձնահատկությունը:

/15 միավոր/

Խնդիր 4. Հարկային օրենսգրքին առնչվող հարցեր

1. Որ՞ դեպքում հարկային գործակալները հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին չեն ներկայացնում «Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին» հաշվարկ:

1,0 միավոր

2. Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները տարածվում են՞ արդյոք միանվագ 500,000 դրամ գործարքի մասով կանխիկ եղանակով մասնակի վճարումների վրա:

1,0 միավոր

3. Որն՞ է հարկային տույժի սահմանումը:

1,0 միավոր

4. Հասարակական կազմակերպությունների կողմից ծառայությունների անհատույց մատուցումն արդյոք՞ ազատվում է ԱԱՀ-ից:

1,0 միավոր

5. Որ՞ դեպքում է ուղևորներին՝ տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայության մատուցման գործարքը համարվում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարք:

1,0 միավոր

6. Որն՞ է հարկային դրույքաչափի սահմանումը:

1,0 միավոր

7. Ռեզիդենտ շահութահարկ վճարողը 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների ինչ՞ ամորտիզացիոն ժամկետը կարող է սահմանել:

1,0 միավոր

8. Ինչպես՞ են ռեզիդենտ շահութահարկ վճարողները հաշվարկում շահութահարկի կանխավճարը:

1,0 միավոր

9. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները արդյոք համարվում են նվազեցվող եկամուտներ:

1,0 միավոր

10. Ինչ՞ դրույքաչափով է հաշվարկվում ստացված օտարերկրյա ֆիզիկական անձ մասնակիցների 2020թ.-ի գործունեության արդյունքում ստացված շահույթից շահաբաժինների մասով եկամտային հարկը:

1,0 միավոր

11. Արդյոք հարկ վճարողը կարող է ներկայացնել ճշտված հարկային հաշվարկ, եթե այն վերաբերում է այն հաշվետու ժամանակաշրջանին, որի ստուգումը՝ տվյալ հարկատեսակի մասով, սկսվել է, սակայն հաշվարկի ներկայացման օրը ստուգման ընթացքը կասեցված է:

1,0 միավոր

12. Ինչն՞ է համարվում անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ:

1,0 միավոր

13. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք կարող՞ են օգտագործել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը:

1,0 միավոր

14. Ինչ՞ դրույքաչափով է հարկվում շրջանառության հարկ վճարողի անհատույց ստացված

դրամական միջոցները:

1,0 միավոր

15. Որ՞ մարմինն է իրականացնում փոխադրամիջոցների զույքահարկի հաշվառումը:

1,0 միավոր

/Ընդամենը 15 միավոր/

Խնդիր 5. Ոչ ռեզիդենտի շահութահարկի վերաբերյալ

ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԱՄՆ-ում գրանցված ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (այսուհետ՝ Ընկերություն) կատարել է հետևյալ գործարքները.

1. Ռեզիդենտ կազմակերպությանը մատուցել է բեռների փոխադրման տրանսպորտային ծառայություն ԱՄՆ-ից մինչև ռեզիդենտ կազմակերպության ՀՀ-ում գտնվող պահեստ՝ դուրս գրելով 1,850 հազար ՀՀ դրամ դրամ արժեքով հաշիվ:

2. Ռեզիդենտ կազմակերպությանը արտերկրում մատուցել է թարգմանչական ծառայություն 1,050 հազար ՀՀ դրամ արժեքով և դուրս գրել հաշիվ, որում նշվել է նաև 50 հազար ՀՀ դրամ արժեքի զեղչ:

3. Արտերկիր գործուղված ռեզիդենտ կազմակերպության աշխատակիցների համար կազմակերպել է ճամփորդություն տվյալ երկրի տեսարժան վայրեր՝ դուրս գրելով 930 հազար ՀՀ դրամ արժեքով հաշիվ:

4. Ռեզիդենտ կազմակերպության հետ կազմել է համաձայնագիր, որով ռեզիդենտ կազմակերպությունը Ընկերության նկատմամբ 3,600 հազար ՀՀ դրամ փոխառության և 400 հազար ՀՀ դրամ չափով տոկոսային պարտքը հաշվանցվել է իր կողմից Ընկերությանը մատակարարած ապրանքի գծով ստացման ենթակա գումարի հետ ամբողջությամբ:

5. Ռեզիդենտ կազմակերպությունը Ընկերությունից նախորդ ամիս ձեռք է բերել պայմանագրով սահմանված չափից ավելի շատ քանակությամբ ապրանք: Ընկերությունը հայտնել է, որ ավել ձեռք բերված ապրանքի արժեքի 30 %-ի՝ 2,300 հազար ՀՀ դրամի չափով պարտքի վճարման ժամանակ պակաս կվճարի:

6. Ռեզիդենտ ֆիզիկական անձին մատուցել է մարկետինգային ծառայություն 3,450 հազար ՀՀ դրամ: Այդ ծառայության մատուցման նպատակով ՀՀ տարածքում ձեռք է բերել 1,550 հազար ՀՀ դրամի նյութեր:

7. Գովազդային ծառայության արժեքի նվազման արդյունքում ռեզիդենտ կազմակերպությանը հետ է վերադարձրել ստացված կանխավճարից 2,300 հազար ՀՀ դրամ:

8. Ընկերությունը ՀՀ-ում կազմակերպել է դասընթաց և ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող մեկ այլ ոչ ռեզիդենտ կազմակերպության աշխատակիցների մասնակցության համար դուրս է գրել 6,850 հազար ՀՀ դրամ արժեքով հաշիվ: Սեմինարը է վարձակալված է ռեզիդենտ կազմակերպության կոնֆերանս-սրահում, որի համար Ընկերությունը վճարել է 1,580 հազար ՀՀ դրամ:

Պահանջվում է հաշվարկել գործարքներից առաջացող հարկային գործակալների և Ընկերության կողմից վճարվելիք ոչ ռեզիդենտի շահութահարկի հանրագումարները:
Պահանջվում է պատասխանել նաև հետևյալ հարցին.

- **Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները (հարկային գործակալ չհամարվողներից ՀՀ աղբյուրներից ստացված եկամուտների մասով) երբ՞, հարկային մարմնի որ՞ ստորաբաժանում և որ՞ հաշվետու ժամանակաշրջանի համար են ներկայացնում «Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի» շահութահարկի հաշվարկը**

15 միավոր